

Սերժիկը

Մարտ 26, 2016 | Անդրադարձ

🔖 0



Share on Facebook

Share on Twitter



Like 0



Մարտ 26-ի առաւօտուն Սերժիկ ընկերոջ մը հետ սուրճ խմելու կ'երթայ ծանօթ ազգայինի մը ատաղձագործարանը։ Կը տեսնէ երկար ձեւով ձեռնառումը մը, կը հետաքրքրուի, ձեռքը կ'առնէ, լաւ մը կը քննէ, ապա կը ժպտի։ Ժպտիլը նշան էր, որ հաւանած էր ապրանքը։ Գործատէրը տեսնելով Սերժիկին հետաքրքրութիւնը եւ հիացումը՝ կ'առաջարկէ, որ հետը վերցնէ։

– Ա՛ռ, տա՛ր, ինձմէ նուէր թող ըլլայ քեզի։

Սերժիկ, ձեռնառումը առած՝ ուրախ զուարթ ընկերոջ հետ կը վերադառնայ Աղբալեան ակումբ։

28 մարտ 1976-ին, Սերժիկ, բուն անունով՝ Սերժ Թովմասեան, կէսօրուան ճաշի հրաւիրուած էր աներձագին՝ Գաբոյին տունը։ Սերժիկ նոր ամուսնացած եւ ընտանիք կազմած էր, իսկ կինը՝ Տիգրանուհի, արդէն յղի էր եւ Սերժիկ կը սպասէր իր առջինեկին։

Ճաշի հրաւիրուած էին նաեւ Գաբոյի կնկան՝ Ռիթայի քոյրը՝ Արտեմիս եւ անոր երեք զաւակները։ Սերժ ուշ հասաւ ճաշի, երբ իրեն կը սպասէին. համեստաբար ներողութիւն խնդրեց ուշացումին համար։ Ներկաները գիտէին արդէն, թէ որքան զբաղած մարդ էր ան։

Ճաշի նստան եւ զուարթ մթնոլորտի մէջ ճաշեցին, կատակեցին, ասկէ-անկէ խօսքեր դարձան եւ եկան բնականաբար լիբանանեան պատերազմի հարցին։

Ժամադրութիւն պատրուակելով՝ Սերժ ոտքի ելաւ, ներողութիւն խնդրեց եւ շտապ մեկնեցաւ։

– Ակումբ պիտի երթամ, պզտիկ գործ մը ունիմ,- ըսաւ։

Մեկնեցաւ։ Տակաւին տնեցիները նստած էին ու կը շաղակրատէին, կը խնդային եւ միւս կողմէ ալ ճորճ Թիւթինճեանի յեղափոխական երգերու ձայներիզը կ'ունկնդրէին։

Շատ չանցած, յանկարծ Անթիլիասի մէջ լսուեցաւ պայթում մը, շատ զարմացուց բնակչութիւնը: Պատճառ մը չկար, որ ռումբ մը իյնար շրջանին մէջ:

Քիչ յետոյ Աղբալեան ակումբէն երկու պատանիներ եկան, Գաբրիէլի դուռը զարկին եւ ըսին, որ ակումբէն զինք կ'ուզեն: Առանց գիտնալու պատճառը՝ Գաբրիէլ շտապեց ակումբ երթալ՝ հետաքրքրութենէ մղուած իմանալու՝ թէ ինչո՞ւ կանչուած էր:

Երբ հասաւ ակումբ, եղբայրը՝ Տիգրան, հոն էր: Անմիջապէս զգաց, որ վատ բաներ պատահած էին: Ակումբը տակն ու վրայ, կիսաքանդ, տղաքը՝ փոշոտ վրայ-գլուխով, աննկարագրելի տեսարան: Միայն Տիգրանին երեսը նայելով՝ Գաբո գուշակեց ողբերգութիւնը, բայց ուզեց աչքերովը տեսնել Սերժիկը:

– Մի՛ երթար նայելու,- ըսաւ Տիգրան, արդէն վերջացած է:

Գաբրիէլ շշմեցաւ...

– Դեռ քիչ առաջ միասին կերանք, խմեցինք, խնդացինք, այս ինչ փորձանք եկաւ գլուխնիս: Հապա՞ քոյրս Տիգրանուհին, որ յղի է, ինչպէ՞ս անոր իմացնել պատահած դառնադէտ մահը: Ան ալ քիչ առաջ ուրախ էր, ամուսնոյն կատակներուն կը խնդար: Կարելի՞ է, որ մէկ վայրկեանէն միւսը զաւեշտը ողբերգութեան վերածուի:

Տուն հասաւ գլխիկոր. դուռը բացաւ, երեսը կախ, ինչ պիտի ըսէր, ինչպէ՞ս ըսել տնեցիներուն պատահած անսպասելի ողբերգութեան մասին: Վստահաբար պիտի չհաւատային, չհաւատալնուն համար՝ հարցումներու տարափ մը պիտի դիմաւորէր: Ինչպէ՞ս եւ ո՞ր բառերով քրոջը պիտի գուժէր ամուսնոյն նահատակուիլը:

Երբ նստասենեակ մտաւ, դէմքին վրայ կարդացին ահռելի աղէտին ազդեցութիւնը: Պարզ հարցում մը՝ «Ինչ է», հարցուցին առաջին եւ վերջին անգամ ըլլալով:

– Սերժիկը,- ըսաւ Գաբո ու լռեց:

Չէր կրնար աւելի խօսիլ: Իրեն նման՝ բոլորը լռեցին, հասկնալով սոսկալի լուրը: Իրենք ալ ահաբեկուածի նման լռեցին, բացի՝ Տիգրանէն:

– Ի՞նչ կ'ըսես, Գաբո՞,- կրցաւ ըսել խեղճ կինը եւ ողբերգութեան ամբողջ ծանրութիւնը իջաւ վրան:

Քաջ էր ան ամուսնոյն պէս բայց լուրը շանթահարիչ էր եւ անսպասելի:

Տնեցիներու բոլորին, նոյնիսկ փոքրերուն համար անհասկնալի երեւոյթ եւ աղէտ էր: Բոլորին մտածումը այդ թոպէներուն նոյնն էր:

Ինչո՞ւ ինքը... ինչպէ՞ս... կարելի՞ բան էր... դեռ քիչ առաջ հոս էր, սեղանէն չէինք ելած, երբ գնաց...

Նման հարցումներ կը զբաղեցնէին ներկաներուն ուղեղը: Այդպիսի պարագաներուն, մարդուս խելքն ալ չի գործեր անակնկալ աղէտին ահաւորութեան առջեւ:

Յաջորդ օր, կէսօրէ ետք ժամը երկուքին, Սերժիկին յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ: Աղբալեան ակումբէն ելլելով՝ յուղարկաւորները իջան Անթիլիասի հրապարակը: Խուռներամ բազմութիւն մը կը հետեւէր դագաղին: Լիբանանի բոլոր շրջաններէն, գրեթէ ամբողջ Անթիլիասի հայութիւնը, ինչպէս նաեւ Պուրճ Համուտէն եւ մայրաքաղաքի շրջաններէն հայորդիներ եկած էին հրաժեշտի վերջին տուրքը տալու հայութեան պաշտպանութեան նուիրուած մարտիկին: Անթիլիասի հրապարակէն թափօրը ուղղուեցաւ կաթողիկոսարան, ուր տեղի պիտի ունենար եկեղեցական կարգը:

Կաթողիկոսարանէն առաջ, ճամբու վրայ կը գտնուի Փաղանգաւոր կուսակցութեան Անթիլիասի բաժնին ակումբը: Երբ յուղարկաւորները հասան այդ ակումբին մօտ, Փաղանգաւոր զինեալներ դուրս ելան եւ ի յարգանս նահատակին, իրենց զէնքերով քսանմէկ գնդակ արձակեցին օդը՝ իրենց ցաւակցութիւնը յայտնելով դաշնակցական զինուորին:

Թաղման արարողութեան նախագահեց բարեջան առաջնորդ Արամ արք. Քէշիշեան: Անթիլիասի մայրավանքէն դագաղը դէպի Պէյրութ-Թրիփոլի մայրուղին տարին, ուրկէ ինքնաշարժներու թափօրով մարմինը փոխադրեցին Ժունիէի ազգային գերեզմանատունը:

Ժունի երբեք նման ժողովուրդ չէր տեսած, մանաւանդ՝ թաղման մը առթիւ: Թաղման արարողութեան կը նախագահէր Տաճատ արք. Ուրֆալեան: ՀՅԴ Կեդրոնական կոմիտէին եւ Անթիլիասի Աղբալեան կոմիտէին անունով դամբանական խօսեցաւ Գէորգ Գանտահարեան, որ իր խօսքին մէջ վեր հանեց Սերժին յատկութիւններէն մին՝ անոր անկեղծ համեստութիւնը: Իսկ Լիբանանի երիտասարդական միութեան կողմէ խօսեցաւ Հրաչ Սիմոնեան: Սգակիր ընկերներ, ըստ սովորութեան, «Վէրքերով լի ջան ֆետայի» երգելով հողին յանձնեցին անմահ Սերժիկը:

Հատուածներ «Լիբանանի «Մեր տղաքը» գիրքէն
Հաւաքեց՝ ՄԱՐՏԻԿ ՄԱՏԵՆՃԵԱՆ

Նախորդը

Նահատակութեան 40-Ամեակ.
Ասպետական Ուխտաւորին Կարօտի
Երգը (Սերժ Թովմասեանին)

Յաջորդը

Ս. Փրկիչ Եկեղեցւոյ Մէջ. Հաւատացեալներու
Հոծ Բազմութիւն Մը Մասնակցեցաւ Աւագ
Ուրբաթ Օրուան Արարողութիւններուն

RelatedPosts